

Արձանագրություն N 154

ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհրդի 2016թ-ի հունիսի 30 -ի նիստի Օրակարգ

1. ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի 2015-2016 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի ամփոփում/զեկ.՝ դեկան, պրոֆեսոր Գ. Պետրոսյան/:
2. Դոկտորական և թեկնածուական ատենախոսության թեմաների հաստատում /զեկ.՝ Խ. Գալստյան/:
3. Ֆակուլտետի ուսանողներին անվանական կրթաթոշակների առաջադրման հարցը /զեկ.՝ դեկանի տեղակալներ Ժ. Մանուկյան, Է. Քալանթարյան/:
4. Կուրստորական աշխատանքների հաշվետվության հարցը/ զեկ.՝ Գ. Բալասանյան/:
5. Ընթացիկ հարցեր:

Խորհուրդը որոշեց.

1. Հաստատել դոկտորական ատենախոսության հետևյալ թեման. ԵՊՀ Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի դոցենտ, պ.գ.թ. Վահրամ Պետրոսյան՝ Իրաքյան Քուրդիստանը Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության համատեքստում(1991-2015թթ.)» ԻԳ.00.04 -«Միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման համար:
2. Հաստատել թեկնածուական ատենախոսության հետևյալ թեմաները.
ա/ Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի ասպիրանտ Շովինար Կոստանյանի թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել «Հարավային Կովկասի հաղորդակցման ուղիների աշխարհաքաղաքական նշանակությունը» ԻԳ.00.02 -«Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:
Գիտական ղեկավար հաստատել քաղ. գիտ. դոկտոր, պրոֆ. Աշոտ Ենգոյանին:
բ/ Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի հայցորդ Շովինար Ղազարյանի թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել «Քաղաքացիական հասարակությունը հակամարտող կողմերի քաղաքական հաշտեցման համատեքստում (ինքնահռչակ պետությունների օրինակով)» ԻԳ.00.02 -«Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Գիտական ղեկավար հաստատել քաղ. գիտ. դոկտոր, պրոֆ. Աշոտ Ենգոյանին:

3. ԵՊՀ ՄԻջազգային հարաբերությունների ֆակուլտետից անվանական կրթաթոշակի ներկայացնել ԵՊՀ ՄԻջազգային հարաբերությունների ֆակուլտետի միջազգային հարաբերությունների բաժնի 3-րդ կուրսի ուսանող Թևանյան Շուշանին և Հանրային կառավարման բաժնի 4-րդ կուրսի ուսանող Տիգրանյան Մերիին:
4. Հաստատել ԵՊՀ ՄԻջազգային հարաբերությունների ֆակուլտետում 2015-2016 ուստարում իրականացված կուրատորական աշխատանքների ահշվետվությունը:

*ԵՊՀ Միջազգային հարաբերությունների
ֆակուլտետի ղեկան, Գիտական խորհրդի
նախագահ, պրոֆ.*

Գ. Պետրոսյան

*ԵՊՀ Միջազգային հարաբերությունների
Ֆակուլտետի Գիտական խորհրդի քարտուղար, դոց.*

Խ. Գալստյան